

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

## ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

04. 07. 2016թ.

ք.Վանաձոր

### Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Վ.Գևորգյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը, - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
- Ա. Սարգսյանը , - մարզպետի օգնական

### Օր ա կ ա ր գ ու մ`

1. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից վերջին հինգ տարիների ընթացքում իրականացրած աշխատանքների եվ ծրագրերի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն պատրաստելու մասին  
/Ա.Նալբանդյան/
2. ա/ Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին  
բ/ Լոռու մարզի տարածաշրջանի համակարգող խորհուրդներ ստեղծելու և առաջին նիստերի անցկացման մասին  
/Զեկ.Ն.Սարգսյան/
3. Համայնքների սեփական եկամուտների մասին  
/Զեկ.Հ.Պապոյան/
4. ՀՀ Կառավարության կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին որպես աջակցություն հատկացված PVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի բաշխման մասին  
/Զեկ. Ս/Լամբարյան/
5. Ամառային զորակոչի աշխատանքների մասին  
/Զեկ.Ս.Ղուբաթյան/
6. ա/Վարչական վերահսկողության հանձնաժողովի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների մասին  
բ/Դատական գործընթացների մասին  
/Զեկ. Ա.Սահակյան/
7. Անձնական գործերի վերահսկողության մասին  
/Զեկ. Ա.Աղլոյան/
8. ա/ Վանաձոր-Ալավերդի ա/ճանապարհի վերանորոգման մասին  
բ/ Մարզում սելավների հետևանքով ճանապարհների ուսումնասիրության և ձեռնարկված միջոցառումների մասին  
/Զեկ. Վ.Գևորգյան/
9. Այլ հարցեր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`**

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝  
Վերլուծել վերջին հինգ տարիների ընթացքում ստորաբաժանման կողմից կատարած աշխատանքները, ձեռքբերումները, ինչպես նաև հետագայում նախատեսվող ծրագրերը և ներկայացնել հաշվետվությունների ձևով:

/Ժամկետ՝ մինչև 2017թ. հունվարի 1-ը/

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

ա/ Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել տարածաշրջանային համակարգող խորհուրդների գործունեության նկատմամբ՝ վերջիններիս աշխատանքը հնարավորինս թափանցիկ դարձնելու նպատակով:

բ/ Քննարկել և ներկայացնել առաջարկություններ PVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի մնացորդի հետագա բաշխման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Կատարել համեմատական վերլուծություններ մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների փոփոխման վերաբերյալ, դրանք դարձնել քննարկման առարկա, առավելապես ուշադրություն հրավիրել հողի հարկի և գույքի վարձակալության ցուցանիշների փոփոխմանը:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Համայնքների ղեկավարների և քարամշակման արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների ուշադրությունը հրավիրել և հանձնարարել միջոցներ ձեռնարկելու գետերի հունների, սելավատարների, հեղեղատների և արտադրական տարածքների մաքրման աշխատանքների իրականացման ուղղությամբ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/